

**ԱՆՅՈՒՄԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱԾԽՄԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ՇԵՐՏԱՎՈՐՄԱՆ ՈՒ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Գ. Ա. ՂԱՐԻՑՅԱՆ, Ա. Ա. ԽԱՌԱՅԱՆ

Պլանայինից շուկայական տնտեսության անցման երկրներում բաշխման և վերաբաշխման գործընթացները զարգացան կենսամակարդակի շերտավորման աճի ուղղությամբ, որի արդյունքում վերջինս բացառիկ կոշտ ձևեր ընդունեց՝ զուգակցվելով բնակչության հիմնական զանգվածի աղքատացման գործընթացների հետ: Այսօր անցումային տնտեսությամբ երկրներում բնակչության կենսամակարդակի* շերտավորման գործոնը գնալով ավելի մեծ կարևորություն է ձեռք բերում, քանի որ զգալի չափով որոշում է ինչպես տնտեսական առաջընթացի տեմպերը, այնպես էլ հասարակության սոցիալ-հոգեբանական մթնոլորտը:

Պլանային տնտեսության բաշխման համակարգը և բնակչության կենսամակարդակի շերտավորումը

Պլանային տնտեսության բաշխման համակարգին բնորոշ մի շարք առանձնահատկություններ բարդացնում են բնակչության կենսամակարդակի շերտավորման գնահատումը: Նախ՝ գործում էր առաջին անհրաժեշտության ապրանքների և ծառայությունների վրա դրված լրավճարների (դոտացիաների) լայն ցանց, ուստի ընտանիքների միջև եկամուտների վերաբաշխումը կախված էր լրավճար ստացող բարիքներից: Այսօր օգտվելու աստիճանից: Երկրորդ՝ հարկումը գործնականում ոչ մի դեպ չէր խաղում, բնակչության մեծ մասի համար զուտ տնօրինելի եկամուտը գրեթե համընկնում էր համախառնի հետ: Երրորդ՝ տարբեր մասնաշաղկապի սպառողական շուկաները բնակչության տարբեր խավերի ձեռքին եղած ռուբլյուն ոչ միատեսակ գնողունակություն էին հաղորդում: Ծուկաներից էին պետական առևտուրը և ծառայությունների ոլորտը, «առևտրական շուկան» (կոոպերատիվ առևտուր և կոլտնտեսային շուկա), այսպես կոչված «վարդագույն» շուկան («ուժեղ» գերատեսչությունների ձեռնարկությունների սոցիալական բարիքներով ավելի լավ ապահովվածությունը, նմանակատուրային աշխատողների հատուկ բաշխման համակարգը, ըստ տարածքների սպառողական ռեսուրսների բաշխման անհավասարությունը), «սև շուկան», որի սուբյեկտները ապրանքների հոսքին մոտ անձիք էին: Չորրորդ՝ բնակչության կենսամակարդակի շերտավորման վրա որոշակի ներգործություն ունեին սովետային եկամուտները, որոնք ստացվում էին կաշառակերությունից, սպեկուլյացիայից, ձևական տնտեսությունից (հավելագրումների և ֆինանսական հաշվետվությունների խախտումների հաշվին), ընդհատակյա տնտեսությունից (ԽՍՀՄ-ում կանանց կոշիկների և պլաստմասե իրերի արտադրությունը Բաշկիրիայում, մորթեղենի ֆաբրիկան Օդեսայում, բամբակի խարդախ գործը Ուզբեկստանում):

* Տնտեսագիտական գրականությունում գոյություն ունեն կենսամակարդակի տարբեր սահմանումներ: Մենք կենսամակարդակը կրճատագրենք որպես նյութական և հոգևոր բարիքներով մարդկանց պահանջումների բավարարման աստիճան:

¹ Սովետային եկամուտների գնահատականները տարբեր են: Այսպես, 1989թ. ԽՍՀՄ Վիճակետկոմը հայտարարեց 70 մլրդ ռուբ. թիվը, իսկ ԽՍՀՄ ՊԱԿ-ի նախագահը՝ 150 մլրդ ռուբ. (տե՛ս **А. Линвуд, Т. Гайгер, Макроэкономическая теория и переходная экономика, М., 1996, էջ 132**):

Պլանային տնտեսությունում արտադրության միջոցների սեփականության ձևը հիմնականում երկուսն էր՝ պետական համաժողովրդական և կոլտնտեսային-կոոպերատիվ: Բարիքների բաշխումն իրականացվում էր ըստ կատարած աշխատանքի քանակի ու որակի և սպառման հասարակական ֆոնդերի միջոցով (ՍՀՖ-ը ապահովում էին սոցիալական երաշխիքներ՝ կարևոր սոցիալական նշանակություն ունեցող բարիքների որոշակի մակարդակ, խրախուսում էին որակյալ աշխատանքը, «հավասարեցնում էին շահները»՝ բոլոր սոցիալական խմբերի ներկայացուցիչների համար ստեղծելով մարդու պոտենցիալ ունակությունների զարգացման բարենպաստ պայմաններ): Բնակչության եկամուտների կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռն ուներ աշխատավարձը: Այսպես, 1970-80-ական թվականներին ՀՍՍՀ-ում բանվորների և ծառայողների ընտանիքների եկամուտների 70-72 տոկոսը կազմում էր աշխատավարձը, 21-25 տոկոսը՝ ՍՀՖ-ից ստացվող վճարումները և արտոնությունները, 3,2-3,9 տոկոսը՝ անձնական օժանդակ տնտեսությունից ստացվող եկամուտը: Կոլտնտեսականների ընտանիքների եկամուտների 40-45 տոկոսը ստացվում էր կոլտնտեսություններից: Կապիտալից ստացվող եկամտի, շահույթի, ռենտայի և դիվիդենդի դերը գրոյական էր²: Վերջիններս համեմատաբար ոչ մեծ դեր էին խաղում միայն այն երկրներում, որտեղ կար մասնավոր սեկտոր (Հունգարիա, Լեհաստան և Հարավսլավիա):

Բնակչության կենսամակարդակի բնութագրման հիմնական ցուցանիշներից է ընթացիկ եկամուտը, ըստ որի պլանային տնտեսությունում կենսամակարդակի աճի կայուն միտում է արձանագրվել: Այսպես, եթե ԽՍՀՄ 1940 թ.-ի տվյալները ընդունենք հավասար 1-ի, ապա 1960 թ. բնակչության մեկ շնչին ընկնող իրական եկամուտները կազմել են 2,5, 1970 թ.՝ 4,0, 1980 թ.՝ 5,8, 1985 թ.՝ 6,5, 1986 թ.՝ 6,6, 1987 թ.՝ 6,8³:

Նույնը չենք կարող ասել կենսամակարդակի շերտավորման փոփոխության միտումների մասին: Սոցիալիստական հասարակությունը ձգտում էր բնակչության բարեկեցության մակարդակների մերձեցման: Այդ լոզունգով իրագործվեց բռնի կոլեկտիվացում, որի համար վերացվեցին կոոպերացիան, անհատական աշխատանքային գործունեությունը և այլն: 30-ականներին աշխատանքի արտատնտեսական հարկադրանքի սոցիալական հետևանքը բնակչության կենսամակարդակի տարբերակման կտրուկ կրճատումն էր: Դա 1931թ. պայմանավորեց հավասարեցման դեմ պայքարի առաջին ալիքը՝ հաստատելով ըստ կենսամակարդակի չտարբերակված հասարակության ոչ կենսունակության մասին Պիտիրիմ Սորոկինի տեսակետը: Ըստ Սայմոն Կուզնեցի տվյալների՝ 30-40-ականների սահմանագծին այդ տարբերակումը առավելագույնն էր 20-ականների վերջերից մինչև 60-ականների սկիզբը ընկած ողջ ժամանակահատվածի ընթացքում: 50-60-ականներին առավել ցածր վարձատրվող խմբերի տեսակարար կշիռը կրճատվում էր (ուղղակիորեն անկախ աշխատանքային ներդրումներից), իսկ միջին և համեմատաբար բարձր վարձատրվողներինը՝ ավելանում: Այնուհանդերձ, վիճակագրական տվյալները փաստում են (չնայած աշխատավարձի բաշխմանը բնորոշ հավասարեցման միտումին), որ եկամուտների տարբերակումը աճել է, իսկ աղքատության հիմնախնդիրը՝ սրվել: Այսպես, Ատկինսոնը և Միկլայթը ցույց են տալիս, որ պաշտոնական վիճակագրությամբ ԽՍՀՄ-ում 1989 թ. կար 40 մլն աղքատ: Ըստ կենսաապահովման նվազագույն քույզի՝ Հունգարիայում աղքատ համարվող բնակչության տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ 1983-90 թթ. կազմել է

² Տե՛ս Գ. Ս. Սարգսյան, Ժողովրդի բարեկեցությունը ՍՍՀՄ-ում, Եր., 1987, էջ 131:

³ Տե՛ս Н. Шмелев, В. Попов, На переломе: экономическая перестройка в СССР, М., 1989, էջ 48:

⁴ Տե՛ս Б. Н. Казанцев, Неизвестная статистика уровня жизни рабочего класса, СОЦИС, 1993, № 4, էջ 3-14, էջ 6,7:

7-ից 10 տոկոս, Լեհաստանում 1981-89 թթ.՝ 14-ից 17, Հարավսլավիայում 1978-89 թթ.՝ 17-24 տոկոս⁵: Ըստ Ն. Վ. Չերնինայի գնահատումների՝ «1975 թ. ԽՍՀՄ-ում բանվորների և ծառայողների ընտանիքների 16 տոկոսը գտնվում էր ... սահմանված աղքատության գծից ներքև... 1985թ. տնտեսագետները առաջարկեցին աղքատության գիծը բարձրացնել մինչև ամսական 75 ռուբլի շնչային եկամուտ. մյուսն չափման դեպքում ԽՍՀՄ-ում ընտանիքների մոտ 11,3 տոկոսը գտնվում էր աղքատության գծից ներքև»⁶: Հայաստանում «յուրաքանչյուր հինգերորդ բնակչի եկամուտը 1988 թ.-ին ցածր էր կենսաապահովման պաշտոնական նվազագույնից»⁷:

1960 թ. ԽՍՀՄ բանվորների վերին խմբի աշխատավարձը գերազանցում էր ստորին խմբին գրեթե 4 անգամ, մինչդեռ շնչային եկամուտը՝ 5 և ավելի անգամ⁸: Հետագա տարիներին բնակչության եկամուտների տարբերակման աճի միտումը պահպանվեց:

Այսպես, Հայաստանում «ընտանիքների բյուջեների հետազոտության 1985թ. և 1990 թ. տվյալները վկայում են, որ հինգ տարիների ընթացքում դրամական արտահայտությամբ ամենացածր միջին շնչային եկամտով ընտանիքների թիվը կրճատվել է ավելի քան 5 անգամ, իսկ ամենաբարձր միջին շնչային եկամտով ընտանիքներին՝ ավելացել շուրջ 7 անգամ»⁹:

Այս ամենը նշանակում է, որ ըստ աշխատանքի բաշխման և սոցիալական երաշխիքների վրա հիմնված սոցիալիստական «սոցիալական արդարության» սկզբունքի սահմանման և նրա պրակտիկ իրագործման միջև մեծ անջրպետ կար, որ բնակչության կենսամակարդակի տարբերակման գործում առուվել կարևոր դեր էին խաղում աշխատավարձի հետ չկապված որոշակի գործոններ:

Այդ գործոններից ամենաէական դերը, ըստ էության, խաղում էր զբաղեցրած պաշտոնը: Որոշումների ընդունման գործընթացը կենտրոնացված էր «նմանակատարչիկների» ձեռքում, որը նրանց ձևարարություն էր տալիս վերահսկել ներդրումները որպես իրենց սեփական միջոցներ և առանց ռիսկի իրագործել եկամտի յուրացում: Այստեղ տեղին է հիշատակել Պ. Սորոկինի եզրահանգումը. «Եթե ինչ-որ ակնթարթ ստրատիֆիկացիայի որոշ ձևեր փյուռվում են, ապա նրանք ծագում են հին կամ ձևափոխված տեսքով և հաճախ ստեղծվում են հենց հավասարարների ձեռքով»¹⁰:

Սոցիալիստական նմանակատարան ուներ բուրգի կառուցվածք, որտեղ արտոնությունները բաշխվում էին ըստ հիերարխիայում գրաված աստիճանի: Հասարակության մնացած անդամների համար ստեղծվել էր ինքնատիպ «ոսկերի մասին տախտակ», որը մի կողմից ներառում էր տնտեսության ճյուղերի հիերարխիան (ժողովնտեսական նշանակալիության աստիճանը), մյուս կողմից՝ սոցիալ-մասնագիտական խմբերի հիերարխիան: Փաստորեն, բնակչության աշխատանքային ներդրումների և կենսամակարդակի միջև եղած կապը մեծ մասամբ

⁵ Տե՛ս "Рынок труда и социальная политика в Центральной и Восточной Европе. Переходный период и дальнейшее развитие", М., 1997, էջ 312:

⁶ Н. В. Чернина. Бедность как социальный феномен российского общества. СОЦИС. 1994, № 3, с. 54-60.

⁷ «Աղքատության հաղթահարման ամփոփ ռազմավարական ծրագիր (նախագիծ)»: «Հայացք տնտեսությանը», ՀՀ կառավարության տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոնի տեղեկագիր, հոկտեմբեր, 2002, թիվ 12, էջ 8:

⁸ Տե՛ս Б. Н. Казанцев, նշվ. աշխ., էջ 6:

⁹ Գ. Ա. Ղարիբյան, Հ. Ա. Մարգարյան, Բնակչության եկամուտների և կենսամակարդակի փոփոխության միտումները Հայաստանում (1980-1990), «Բանբեր Երևանի Համալսարանի», 1998, № 1, էջ 33, 36:

¹⁰ П. А. Сорокин. Человек. Цивилизация. Общество. М., 1992, с. 307.

որոշվում էր վերը նշված աղմկահատրատիվ-կարգավիճակային բաշխման համակարգով: Նման կազմակերպումը պետք է եկամտուների վերաբաշխման ոլորտում անսահմանափակ հնարավորություններ ունենար ինչպես համընդհանուր հավասարեցման, այնպես էլ գերտարբերակում պահելու ուղղությամբ: Բնականաբար նմենկլատորան ընտրեց վերջինը: Լ. Ի. Բրեժնևի ժամանակներից սկսած՝ նմենկլատորան այնպիսի աննախադեպ կայունության և ամենակարողության հասավ, որ 1970 թ. Ֆրանկֆուրտում հրատարակված «Լենինգրադյան ծրագրում» ասվում է. «Նմենկլատորան անբաժանելի է սոցիալիստական հասարակությունից, ինչպես կապիտալն է անբաժանելի բուրժուական հասարակությունից: Դա նրա իրավական հիմքն է, նման կապիտալիզմի ժամանակ մասնավոր սեփականության իրավունքին»¹¹:

Պատահական չէ, որ 70-80-ական թվականներին կապիտալիստական երկրներում ոչ քիչ գրքեր են հրատարակվել՝ ուղղված սոցիալիստական երկրներում ծագած նոր գերիշխող «դասակարգի»՝ նմենկլատորայի (Մ. Զիլսաի «Նոր դասակարգ») քննադատությանը¹²:

Կարծում ենք, նմենկլատորան ոչ թե դասական իմաստով իշխող, այլ անլեզալ հաստատագրված իշխող դաս կամ դասակարգ էր:

Կենսամակարդակի տարբերություններ էին ձևավորվել ոչ միայն նմենկլատորայի և հասարակության մնացած մասի միջև, այլ նաև մասսայական հասարակական խմբերի, մասնավորապես քաղաքի և գյուղի բնակչության միջև: Այսպես, Հայկ. ՍՍՀ-ում «1974 թ. ... ըստ ընդհանուր ծավալի գյուղական բնակչության ՍՀՖ-ից եկող եկամտները քաղաքային բնակչության նման եկամտների համեմատ կազմել է 76,3 տոկոս... Եթե ամբողջությամբ վերցրած Հայկ. ՍՍՀ-ում 1970 թ. բնակչության մեկ շնչի հաշվով ապրանքաշրջանառության ծավալը կազմել է 708 ռուբլի, ապա գյուղում՝ ընդամենը 225 ռուբլի...»¹³: Բնակարանով ապահովվածության հավասար պայմանների սկզբունքը գյուղական բնակչությանը չէր վերաբերում (այդ սկզբունքը լիարժեք չէր կիրառվում անգամ քաղաքային բնակչության հանդեպ, գրականությունում վկայություն կա բնակարանի որակի և եկամտուների միջև կոռելյացիոն կապի գոյության մասին)¹⁴:

Այսպիսով, պլանային տնտեսության բաշխման մոդելը հիմնվում էր երկու հիմնական սկզբունքի վրա. սովետային, բայց իրական տարբերակում՝ ըստ գրավվածության կարգավիճակի (պաշտոնի և կոչման, հաստատության կատեգորիայի) և հավասարեցման միտում՝ ըստ աշխատանքային ներդրման:

Բաշխման համակարգը և բնակչության կենսամակարդակի շերտավորումը պլանայինից շուկայական տնտեսության անցման երկրներում

Կենսամակարդակի կտրուկ անկումը և շերտավորման աճը տնտեսական վերափոխումների «ուղեկից» դարձան բոլոր սոցիալիստական երկրներում. մի բևեռում արագ տեմպով (քանի որ ոչ թե նոր կապիտալ էր ստեղծվում, այլ պետական սեփականությունն էր բաժանվում) տեղի ունեցավ և շարունակվում է հարստության ձևավորումը և կուտակումը, մյուսում՝ թերապահովվածության և

¹¹ Н. Алексеев, С. Зорин. Время не ждет. Наша страна находится на поворотном пункте истории (Ленинградская программа). Франкфурт, 1970.


¹² St'u Janowitzsch Murray. Social and Economic inequality in Soviet Union. Six Studies. N. Y. 1977, էջ 189; Nove Alec. The Class Nature of the Soviet Union Revisited-Soviet Studies Glasgow, 1983, № 3, էջ 302-308:

¹³ Г. А. Гарибян. Проблемы повышения уровня жизни населения в развитом социалистическом обществе. Ер., 1977, с. 223, 225, 227.

¹⁴ St'u Н. Б. Косарева, Рынок жилья и социальные гарантии, - "Проблемы прогнозирования", 1992, № 1.

աղքատության կուտակումը: Նկատի ունենա՞նք, որ անցումայնության գծերը այս երկրներում այսօր բնորոշ են սոցիալ-տնտեսական կյանքի բոլոր կողմերին, այդ թվում՝ բաշխման հարաբերություններին և բնակչության կենսամակարդակի շերտավորմանը: Բաշխման համակարգում տեղի ունեցած հիմնական փոփոխություններ կարելի է համարել՝ գործունեության նոր տեսակների և նոր ոլորտների ծագումը, եկամուտների հնարավոր նոր աղբյուրների և նոր կառուցվածքի ձևավորումը (տե՛ս Ակար 1), ՍՀՖ-ի համարյա վերացումը և սոցիալական կարիքների ուղղված ծախսերի կրճատումը, գործատուների ու վարձու աշխատողների միջև նոր հարաբերությունների ի հայտ գալը և այլն:

Նկար 1. Տնային տնտեսությունների ընթացիկ դրամական եկամուտների կառուցվածքն ըստ հիմնական աղբյուրների (2001թ.)¹⁵



Ջիճի գործակցի* միջին ցուցանիշը ետսոցիալիստական երկրների համար մինչ վերափոխումները գրանցված 0,20-0,26-ից դարձել է մոտ 0,34, սակայն ըստ երկրների և ռեգիոնների բնակչության՝ եկամուտներում եղած իրական տարբերությունները շատ անհավասարաչափ են բաշխված և փաստացի ցուցանիշներից ավելի բարձր են, քանի որ տնային տնտեսությունների ընտանեկան բյուջեների վիճակագրության հետազոտություններում լրիվ չեն ներառվում մի կողմից «նոր հարուստները», մյուս կողմից՝ «սոցիալական հատակը» կազմող բնակչության խմբերը:

Անցումային տնտեսությունում բնակչության կենսամակարդակի շերտավորման աճին նպաստեցին հետևյալ գործոնները: Նախ՝ սեփականաշնորհման գործընթացը: Այն իրականացվեց բնակչության անհավասար ելակետային հնարավորությունների պայմաններում, որտեղ էական դեր խաղաց բնակչության նախկին համակարգում արդեն ձևավորված սոցիալական շերտավորումը (անհրաժեշտ տեղեկատվության և ֆինանսական միջոցների մենաշնորհացման տեսանկյունից): Սեփականաշնորհման ժողովրդական ուղին, ըստ էության, ֆիկցիա մնաց, քանի որ սերտիֆիկատները չնչին գներով անցան հարուստներին:

¹⁵ Տե՛ս «ՀՀ բնակչության եկամուտներն ու ծախսերը և սննդամթերքի սպառումը 1999 և 2000 թթ.», «Վիճակագրական տեղեկագիր», Եր., 2002, էջ 20:

* Ջիճի գործակիցը ցույց է տալիս եկամուտների (ծախսերի) համակենտրոնացման աստիճանը բնակչության տարբեր շերտերում: Այն ընդունում է արժեքներ 0-ից 1 միջակայքից: Որքան մեծ է Ջիճի գործակիցը, այնքան մեծ է անհավասարությունը:

Երկրորդ՝ անկատար մրցակցությունը (անհավասար է բաշխված ոչ միայն նյութական, այլ նաև մարդկային կապիտալը, որն ավելի է խորանում կրթական համակարգի վճարովի դառնալով), օրենսդրական դաշտի անկատարության պատճառով հարկային դաշտում տնտեսական սուբյեկտների համար ստեղծված անհավասար պայմանները, կոռուպցիան, վարկերի օգտագործման ընթացքում տեղ գտած անօրինականությունները:

Երրորդ՝ տնտեսության անկումը և սղանը, լրավճարների վերացումը, սոցիալական ծախսերի կրճատումը, ֆիզիկական անձանց վրա ընկնող հարկային բեռի ուժեղացումը, աշխատավարձի երկարաժամկետ չվճարումները և մի շարք այլ պատճառներ, որոնք հանգեցրին բնակչության մի ստվար զանգվածի իրական եկամուտների անկմանը:

Չորրորդ՝ աշխատավարձի դեցիլային գործակցի աճը, վարձու աշխատողների և ձեռներեցների եկամուտների միջև, նաև ձեռներեցների եկամուտների միջև եղած խզման խորացումը:

Հինգերորդ՝ շուկայական պայմաններին բնակչության դանդաղ հարմարվելը, պլանային տնտեսությունից ժառանգություն մնացած պետության հանդեպ խնամառական հոգեբանությունը:

Վերափոխումների արդյունքում ի հայտ եկած բնակչության կենսամակարդակի շերտավորման աճը ամենևին չի նշանակում շուկայական տնտեսության առավելությունների անտեսում. մեծացել է ապրանքների առաջարկը, աշխատավորի տնտեսական և քաղաքական ազատությունը, աշխատանքի առավել իրական խթանները, արտասահմանյան տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները և այլն:

Անցումային տնտեսությամբ երկրներում այսօր ձևավորված կենսամակարդակի շերտավորումը մի շարք առանձնահատկություններով տարբերվում է ինչպես պլանային, այնպես էլ շուկայական տնտեսությամբ երկրների կենսամակարդակի շերտավորումից: Նախ՝ ի թիվս սոցիալապես խոցելի խմբերի՝ ստորին դեցիլներում են հայտնվել նաև տնտեսապես ակտիվ և բարձրորակ մասնագետները: Նրանց ցածր եկամուտները այսօր պայմանավորված են ոչ մեծ աշխատավարձով, լրիվ գործազրկությամբ կամ մասնակի զբաղվածությամբ, աշխատավարձի կամ կենսաթոշակների վճարումների ուշացումներով:

Երկրորդ՝ աշխատողների մեծ մասի աշխատավարձը չի կատարում ոչ վերարտադրողական, ոչ էլ խթանող ֆունկցիա: ՀՀ-ում, օրինակ, չնայած աշխատատեղերի առկայությանը, շատ մարդիկ խուսափում են դրանցում գործի անցնել աշխատուժի գերշահագործման և աշխատավարձի ցածր չափերի պատճառով (5000-10000 դրամ), աղքատ է զբաղված բնակչության 45-47 տոկոսը¹⁶: Երրորդ՝ կենսամակարդակի շերտավորումը նվազեցնելու գործում տնտեսական աճը էական դեր չի խաղում: Նրա պտուղներից օգտվում է հիմնականում ամենահարուստ 5-10 տոկոսը (ՀՀ-ում 2001թ. գրանցվել է կենսամակարդակի շերտավորման կրճատում): Չորրորդ՝ վերափոխումների ընթացքում նմանելիատուրան իր քաղաքական և բյուրոկրատական ռեսուրսները փոխանակեց տնտեսական ռեսուրսների հետ, որը, նպաստելով ունեոր խավի կողմից կապիտալի կուտակմանը, պայմաններ պետք է ստեղծեր տնտեսական աճի համար:

Այնուհանդերձ, ունեորների մեծ մասը խուսափում է իր կուտակումները երկրի ներսում արտադրական կապիտալի վերածելուց:

Կենսամակարդակի շերտավորումը բազմաչափանիշ կատեգորիա է (այն բնութագրվում է բնակչության ընթացիկ եկամուտներով, ֆինանսական

¹⁶ Տե՛ս «Աղքատության հաղթահարման ամփոփ ուղևորական ծրագիր (նախագիծ)», «Հայացք տնտեսությանը», ՀՀ կառավարության տնտեսական քառփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոնի տեղեկագիր, հոկտեմբեր, 2002, № 12, էջ 10:


ակտիվներով, տնային տնտեսության կուտակած անշարժ գույքի արժեքով, առողջապահության, կրթության և բնակարանային-կոմունալ տնտեսության սպառվող ծառայություններով և այլն): Ընդունելով, որ եկամուտների տարբերակումը և կենսամակարդակի տարբերակումը տարբեր հասկացություններ են, այնուհանդերձ համաշխարհային պրակտիկայում կենսամակարդակի բնութագրման մեկ չափանիշի ընտրության դեպքում հաճախ նախասպառվությունը տրվում է իրական եկամուտների տարբերակմանը:

Ջինի գործակիցը ըստ եկամտի՝ Հայաստանում 1987-90 թթ. համար գնահատված 0,27-ից 1996-99 թթ. հասել է 0,60, որը վկայում է եկամուտների գերբևեռացվածության մասին: 2001 թ. ՀՀ բնակչության ամենահարուստ 10 տոկոսը ստանում էր եկամուտների 39,4 տոկոսը, իսկ ամենաաղքատ 10 տոկոսը՝ եկամուտների 1,5 տոկոսը: Ընթացիկ ծախսերի ցուցանիշների համադրումը համեմատաբար բարվոք արդյունքներ է արձանագրում (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1¹⁷

Դեցիմներ		Մեկ շնչի հաշվով ընթացիկ ծախսերը, %			Մեկ շնչի հաշվով ընթացիկ եկամուտները, %		
		1996	1999	2001	1996	1999	2001
Ամենաաղքատ	10%	2,1	3	3,4	0,3	0,4	1,5
	20%	3,4	4	5,3	1,3	1,5	3,0
	30%	4,3	5	6,5	2,3	2,5	3,4
	40%	5,2	5	7,2	3,3	3,5	5,1
	50%	6,2	7	7,8	4,4	4,9	5,9
	60%	7,5	8	9,2	5,9	6,2	6,5
	70%	9,1	10	10,3	8,0	8,1	9,0
	80%	11,5	12	11,0	11,3	10,7	10,6
	90%	15,7	16	13,8	17,4	16,0	15,6
Ամենահարուստ	10%	35,0	29	25,5	45,8	46,2	39,4
Ջինի գործակիցը		0,4436	0,372	0,344	0,6021	0,593	0,535

Նկար 2. Տնային տնտեսությունների դրամական եկամուտները և սպառողական ծախսերը ըստ դեցիլային խմբերի (ամսական միջինը տնային տնտեսության մեկ անդամի հաշվով, դրամ)¹⁸



Նկար 2-ից երևում է, որ 2001 թ. ՀՀ-ում առաջին ութ դեցիլային խմբերում տնային տնտեսությունների մեկ անդամի հաշվով սպառողական ծախսերը գերազանցում են դրամական եկամուտները, իսկ 9-րդ և 10-րդ դեցիլներում՝ ընդհակառակը: Եթե աղքատ դեցիլային խմբերի համար ցուցանիշների նման հարաբերակցությունը,

¹⁷ Աղբյուրը՝ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2002»: ՀՀ ազգային վիճակագր. ծառայություն, Եր., 2002, էջ 93:


¹⁸ Աղբյուրը՝ «ՀՀ բնակչության եկամուտներն ու ծախսերը և սննդամթերքի սպառումը 1999 և 2000 թթ.», «Վիճակագրական տեղեկագիր», Եր., 2002, էջ 25, 26, 39, 40:

մեր կարծիքով, մասամբ կարող ենք բացատրել սպառման ձեռք բերած մակար-
դակը պահպանելու, իսկ ավելի հաճախ՝ գոյատևելու նպատակով, նախորդ հա-
մակարգի կամ, ընդհանրապես, նախորդ տարիների ժամանակ կուտակած ունեց-
վածքի վաճառքով, հարուստ դեցիլային խմբերի համար՝ խնայողությունների կու-
տակմամբ, իր եկամուտների հավելաճի նշանակալի մասը նյութական և ֆինան-
սական իրացվող ակտիվներ դարձնելով, ապա ՀՀ բնակչության համար ամբող-
ջությամբ վերցրած՝ ստվերային եկամուտների առկայությամբ: ՀՀ-ում ստվերա-
յին տնտեսության տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ, ըստ տարբեր գնահատական-
ների, կազմում է 30 և ավելի տոկոս, ուստի բնակչության եկամուտների մակար-
դակի և եկամուտների տարբերակման աստիճանի մասին պաշտոնական վիճա-
կագրության տվյալները չեն արտացոլում հասարակության մեջ տեղի ունեցող ի-
րական գործընթացները:

Նկար 3-ի տվյալների հիման վրա կարելի է փաստել, որ առաջին դեցիլային խմբի բնակչության ծառայություններին հատկացվող ծախսերի բաժինը կազմում է ընդհանուր ծախսերի 8,7 տոկոսը, ոչ պարենային ապրանքներին հատկացվողը՝ 4,6 տոկոսը, իսկ տասներորդինը՝ համապատասխանաբար 21,1 և 23,9 տոկոսնե-
րը: Ամենաաղքատ դեցիլային խմբում սննդի վրա կատարվող ծախսերը կազմում են ընդհանուր ծախսերի 80,36 տոկոսը:

2001 թ. Երևան քաղաքի բնակչության ամենահարուստ 10 տոկոսի մեկ շնչի հաշվով միջին ամսական ընթացիկ եկամտի հարաբերությունը ամենաաղքատ 10 տոկոսի նույն ցուցանիշին կազմել է 40,6:1, մինչդեռ մեկ շնչի հաշվով միջին ամ-
սական սպառողական ծախսերի հարաբերությունը՝ 11,5:1¹⁹: 1999թ. երևանաբնակ բնակչության ամենաանապահով 20 տոկոսին բաժին էր ընկնում եկամուտների 3 տոկոսը, իսկ ամենաապահով 20 տոկոսին՝ 60 տոկոսը²⁰: 1999թ. վաճառքից ստացվող տարեկան եկամտի չափով գյուղական ընտանիքները բաշխվել են հետևյալ կերպ. 11 տոկոսինը՝ 200 ԱՄՆ դոլար, 20 տոկոսինը՝ 500 ԱՄՆ դոլար, 14 տոկոսինը՝ 1000 ԱՄՆ դոլար, 15 տոկոսինը՝ 2000 ԱՄՆ դոլար, 6 տոկոսինը՝ 3000 ԱՄՆ դոլար, 7 տոկոսինը՝ 3000 ԱՄՆ դոլարից ավելի, 25,6 տոկոսը՝ չի ունե-
ցել եկամուտ²¹:

Նկար 3²². Տնային տնտեսության սպառողական ծախսերը ըստ դեցիլային խմբերի 2001 թ. (ամսական միջինը տնային տնտեսության մեկ անդամի հաշվով, դրամ)



¹⁹ Աղբյուրը՝ «ՀՀ բնակչության եկամուտներն ու ծախսերը և սննդամթերքի սպառու-
մը 1999 և 2000 թթ.», «Վիճակագրական տեղեկագիր», Եր., 2002, էջ 63, 74:

²⁰ Տե՛ս Հ. Սարգսյան, Տնտեսական քաղաքականությունը Հայաստանում, պետու-
թյան դերը, Եր., 2001, էջ 36:

²¹ Տե՛ս «Աղքատության հաղթահարման խմբեր տեսլականը», Եր., նոյեմբեր, 2001, էջ 116:

²² Աղբյուրը՝ «ՀՀ բնակչության եկամուտներն ու ծախսերը և սննդամթերքի սպառու-
մը 1999 և 2000 թթ.», «Վիճակագրական տեղեկագիր», Եր., 2002, էջ 39:

Այսպիսով, պլանայինից շուկայական տնտեսության անցման երկրներում ընդհանուր առմամբ բնակչության կենսամակարդակի շերտավորումը խորացել է: Ենթադրման խորացումը տեղի է ունեցել սոցիալական պաշտպանության մեխանիզմների անբավարարության և բացակայության, բնակչության կենսամակարդակի ընդհանուր անկման պայմաններում: Ուստի մենք այն գնահատում ենք որպես բացասական, ապակայունացնող գործոն, որի միակ դրական ֆունկցիան կարող է լինել կապիտալի կուտակումը: Սակայն այդ կուտակումները հենց տվյալ երկրի տնտեսության զարգացման մեջ ներդնելու հավանականությունը ցածր է՝ կապված ինչպես հասարակության կողմից այդ հարստությունը ոչ օրինական ճանաչելու հետևանքով այն թաքցնելու ձգտման և մեծ ռիսկի առկայության, այնպես էլ գլոբալացման դարաշրջանի՝ դրսույն ներդնելու ընձեռած հնարավորությունների հետ:

Նման իրավիճակում կարևորվում է պետության ճիշտ սոցիալական քաղաքականությունը, «սոցիալական արդարության սկզբունքին» համապատասխան եկամուտների վերաբաշխումը:

Այս սկզբունքի մեկնաբանությունները բազմազան են. այստեղ հասկացվում են և՛ հասարակության բոլոր անդամների առավելագույն նյութական հավասարության ապահովումը, և՛ հավասար մեկնարկային պայմանների ստեղծումը, և՛ պետության պարտավորությունը՝ աջակցելու հասարակության առավել քիչ ապահովված խավերին, և՛ չափից ավելի շերտավորման թույլ չտալը և այլն: Արիստոտելի խոսքերով ասած՝ «սոցիալական արդարությունը» հասկացվում է «մեկ որպես հավասարեցնող, մեկ որպես տարբերակող կատեգորիա»: Սոցիալական արդարության սկզբունքը ակտիվորեն օգտագործվել է ամենատարբեր սոցիալական կողմնորոշում ունեցող երկրների հիմնական օրենքներում: Կոմունիստական և սոցիալիստական հասարակությունները օրինականացնում էին սոցիալական արդարությունները՝ հիմնվելով անհատական վաստակի վրա, հասարակության բոլոր անդամների համար առաջնային պահանջմունքների բավարարման հավասար երաշխավորվածության վրա, կոմունիստական հասարակությունը պետք է ներմուծեր անհատական պահանջմունքների վրա հիմնված սոցիալական արդարությունը: Շուկայական տնտեսությունում սոցիալական արդարության իմաստը այն է, որ ավելի շատ իմացողը, ավելի ձեռներեցը, ավելի շատ և լավ ռեսուրսներ ունեցողը հայտնվում է ավելի լավ տնտեսական վիճակում, և ընդհակառակը: Սակայն արդարության մյուս կողմը՝ մարդասիրական բնույթի սոցիալ-տնտեսական հավասարությունը, ենթադրում է մասն հավասար մեկնարկային հնարավորությունների, իսկ հասարակության ավելի պակաս ունակություններով անդամների համար՝ նվազագույն կենսամակարդակի ապահովում: Ետսոցիալիստական երկրներում սոցիալական արդարության պահանջների թվին են դասվում այնպիսիները, ինչպիսիք են սոցիալական ծայրահեղ բևեռացման կանխումը, սոցիալապես առավել խոցելի խավերի պաշտպանումը, վաստակը կիրառած ջանքերին համապատասխանեցնելը, մարդասիրությունը և այլն: Ըստ հարցումների տվյալների՝ Ասիայի և սոցիալիստական երկրների բնակիչների մեծ մասի համար սոցիալական հավասարությունը ավելի մեծ արժեք է, քան իրավական ազատությունը:

Ետսոցիալիստական կառավարությունը կենսամակարդակի շերտավորման կարգավորման, բաշխման հարաբերությունների կատարելագործման վճռորոշ գործոն է և իր սոցիալ-տնտեսական քաղաքականությունը պետք է ուղղի՝ 1. տնտեսական աճին, տնտեսության մեջ այնպիսի կառուցվածքային բնականոն փոփոխություններին, որոնք ազատ մրցակցության միջոցով նպաստեն եկամուտների միջնուղային և ներճյուղային անհավասարությունների փոքրացմանը (ներգործությունը եկամուտների անհավասարության վրա մեծ կլինի, եթե տնտեսական աճում մեծ ներդրում ունենան ցածր միջին աշխատավարձ ապահովող ճյու-

դերը, որտեղ զբաղվածները հայտնվել են ստորին կվինտիլներում), 2. մրցակցության պաշտպանությանը, որը կհանգեցնի տնտեսության արդյունավետության աճին, 3. հիմնարար կրթության և առողջապահության բարելավմանը, որը կարող է և՛ մեծացնել տնտեսական աճի տեմպը, և՛ բարելավել բաշխումը, 4. պետության եկամուտների վերաբաշխման ֆունկցիայի ակտիվացմանը, 5. սոցիալական ապահովագրության ոլորտի ընդլայնմանը:

Հարկ ենք համարում նշել, որ անցումային տնտեսությունում կենսամակարդակի տարբերակման կրճատմանը նպատակաուղղված կառավարումը բախվում է մի շարք բարդությունների և հիմնախնդիրների հետ, որոնցից մեկը կապված է կենսամակարդակի շերտավորման փոփոխության ոչ զծայնության հետ, մյուսը՝ էլիտար խմբերի կողմից կոռուպցիայի ծավալման և իր աճող եկամուտները նոր ձևավորվող միջին դասի (ձեռներեցների և որակյալ աշխատողների) հետ կիսել չցանկանալու, երրորդը՝ պետության կողմից եկամուտների վերաբաշխման ֆունկցիայի իրագործման: Վերջապես, չպետք է մոռանալ, որ «սոցիալական արդարության սկզբունքին» համապատասխան բաշխում կարող է իրագործվել միայն իրավական պետությունում:

Г. А. ГАРИБЯН, А. А. ХАРАТЯН - *Отношения распределения переходной экономики и проблемы расслоения жизненного уровня населения и социальной справедливости.* - Статья посвящена проблемам системы распределения и расслоения жизненного уровня населения постсоциалистических стран.

Показано, что модель распределения плановых экономик основывалась на двух основных принципах: на теневом принципе с реальной, однако, дифференциацией состояния занятости (по должности и званию, категории учреждения) и на принципе уравниловки по трудовым вкладам. В странах с переходной экономикой расслоение жизненного уровня населения усугубилось, сопровождаясь массовым обеднением населения. В статье представлены особенности расслоения жизненного уровня населения постсоциалистических стран и основные факторы, способствующие росту расслоения. Более подробно исследовано расслоение жизненного уровня населения Республики Армения. Подчеркивается роль правильной социально-экономической политики государства в смягчении расслоения жизненного уровня населения и перераспределении доходов по принципу социальной справедливости.